# Նորին Մեծություն կայսեր ծննդյան օրվա առթիվ կազմակերպված ընդունելություն

Փետրվարի 19-ին Երևանի Մարիոթ հյուրանոցում տեղի ունեցավ Նորին Մեծություն կայսեր ծննդյան օրվա առթիվ կազմակերպված ընդունելություն: Ընդունելությունը սկսվեց «Հովեր» պետական կամերային երգչախմբի կողմից Ճապոնիայի և Հայաստանի պետական օրհներգերի կատարմամբ, որին հաջորդեց դեսպան Առկիի ելույթը և պատվավոր հյուրի՝ ՀՀ փոխվարչապետ պարոն Միհեր Գրիգորյանի շնորհավորական ուղերձը: Հյուրերի թվում էին ՀՀ կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, դիվանագիտական կորպուսի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, արվեստի և մշակույթի ոլորտի ներկայացուցիչները, ինչպես նաև գործարար համայնքների անդամները: Երգչախմբի կողմից «Սակուրա» երգի կատարումից հետո հյուրերը վայելեցին ճապոնական խոհանոցը և ճապոնական սակեն: Ընդունելության բոլոր մասնակիցները նշեցին Նորին Մեծություն կայսեր 66-ամյակը և մաղթեցին նրան առողջություն և Ճապոնիա-Հայաստան հարաբերությունների հետագա զարգացում:

Դեսպան Առկիի ելույթը

Պատվավոր հյուրը՝ ՀՀ փոխվարչապետ պարոն Միհեր Գրիգորյանը

Հյուրերի դիմավորում

Պետական օրհներգերը՝ երգչախմբի կատարմամբ